ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 172-Ա/3 «07» 10. 2024 թ.

«ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/73» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված փոշեկուլների գնման գործընթացին հայտ ներկայացրած «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ-ի փաստաթղթերը անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն տալուց հետո կրկին չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ դիմում-հայտարարության մեջ նշված չի եղել, որ նաև մասնակցին փոխկապակցված անձիք են բավարարում ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովը 02.10.2024թ որոշմամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն, մերժել է վերջինիս հայտը, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ»-ին (ՀՎՀՀ՝ 05563416, գործունեության հասցեն՝ ք.Արթիկ) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

10/7/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**